



2019թ. սեպտեմբերի 28-ին ժամը 12<sup>00</sup>-ին տեղի կունենա Գավառի պետական համալսարանի 22-րդ գիտաժողովը՝ նվիրված Հովհաննես Թումանյանի ծննդյան 150-ամյակին:

Գիտաժողովն անցկացվելու է ըստ գիտության հետևյալ բնագավառների.

- Ֆիզիկամաթեմատիկական գիտություններ
- Քիմիական գիտություններ
- Կենսաբանական գիտություններ
- Տեխնիկական գիտություններ
- Էկոլոգիական գիտություններ
- Գյուղատնտեսական գիտություններ
- Պատմական գիտություններ
- Տնտեսական գիտություններ
- Փիլիսոփայական գիտություններ
- Բանասիրական գիտություններ
- Իրավաբանական գիտություններ
- Մանկավարժական գիտություններ
- Հոգեբանական գիտություններ
- Սոցիոլոգիական և քաղաքական գիտություններ
- Աշխարհագրություն, երկրաբանություն և երկրաբնապահպանություն:

Ստորև ներկայացնում ենք գիտական հոդվածների տեխնիկական պահանջները:

Գիտաժողովի նյութերի հրապարակման համար խնդրում ենք մինչև ս/թ սեպտեմբերի 20-ը Գավառի պետական համալսարան ներկայացնել գիտական հոդված՝ 5-ից 10 էջի սահմաններում, հայերեն, ռուսերեն կամ անգլերեն լեզուներով երկու օրինակից, համակարգչային շարվածքով B 5 (17սմ x 24սմ) չափի տպագրական թղթի վրա, «GHEA Grapalat» տառատեսակով, 1,12 միջտողային հեռավորությամբ, թղթի բոլոր կողմերից 18 մմ լուսանցքով), էջադրումը՝ էջի ներքևում (footer), կողմնորոշումը՝ կենտրոն, սահմաները 1սմ: Վերևում նշել վերնագիրը՝ 10,5 տառաչափով (մեծատառերով, Bold): Վերնագրից մեկ տող ներքև՝ աջ անկյունում, նշել հեղինակ(ներ)ի ազգանունը, անունը (Bold), գիտական աստիճանը և կոչումը (սկսել մեծատառով, նոր տողից), զբաղեցրած պաշտոնը (սկսել նոր տողից): Մեկ տող ներքև 10,5 pt տառաչափով տրվում է հեղինակի էլեկտրոնային փոստի հասցեն: Մեկ տող բաց թողնելով 10 pt տառաչափով, շեղատառ (italic), թավ (Bold) ներկայացվում է հոդվածի ամփոփագիրը (аннотация, abstract), որտեղ 120-170 բառի սահմաններում պետք է արտացոլվեն հետազոտության նպատակները, խնդիրները, մեթոդները, ինչպես նաև հեղինակի հիմնական եզրահանգումները: Մեկ տող բաց թողնելով անհրաժեշտ է գրել «Բանալի բառեր» նշել 7-10 բանալի բառեր: Բաց թողնելով երկու տող՝ շարադրել աշխատանքը՝ վերջում նշելով նաև խմբագրական խորհուրդ ներկայացման և

գրախոսման օրը, ամիսը, տարին, օգտագործված գրականության ցանկը, գրականության հղումները: Լատիներեն և հունարեն տառերը, սիմվոլները, ինչպես նաև բանաձևերը հավաքել Microsoft Equation Editor 3.0 ծրագրով, նկարների բացատրությունները և աղյուսակները (ներկայացնել նկարի տեսքով)՝ 10 տառաչափով, ինչպես նաև հոդվածի շարադրանքի լեզվից տարբեր վերը նշված երկու լեզուներով՝ հոդվածի վերնագիրը, ամփոփագիրը, հեղինակ(ներ)ի ազգանունը, անունը, գիտական աստիճանը և կոչումը, զբաղեցրած պաշտոնը:

Չափորոշիչներին չհամապատասխանող զեկուցումները չեն ընդունվելու: Ջեկուցումները ներկայացնել նաև էլեկտրոնային տարբերակով:

Կից անհրաժեշտ է ներկայացնել համապատասխան ամբիոնի կամ գիտական կազմակերպության երաշխավորությունը, կարծիք առաջարկվող հոդվածի մասին:

Գավառի պետական համալսարան,

ք. Գավառ, Հրանտ Հակոբյան 1,

հեռ. (0-60) 46-02-01, (0-60) 46-04-03, (0-264) 2-57-75

E- mail: info@gsu.am, infogsu@mail.ru